




ՀՈՐԻՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 159

8 ՕԴՈՍՏՈՍ 1914

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ՏՕՆԱՑՈՅՑ

Օգոստ.	9	†	Կիր.	դկ.	Գ. Զկնի վարդավառի : Բարեկենդան Աստուածածնի :
10	Բշ.	աձ.			Ա. or պահոց Աստուածածնի :
11	Գշ.	ակ.			Բ. » » »
12	Դշ.	քձ.			Գ. » » »
13	Եշ.	բկ.			Դ. » » »
14	Ուր.	գձ.			Ե. » » »
15	Շք.	զկ.			Տօն է շողակաթին :

ԼՈՅՍ ՏԵՍԱԴ

Ե Ս Թ Ե Ր

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՌԱՍԻՆԻ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԽԱԶԻԿ Վ. ԱԹԱՆԱՍԵԱՆ

Տպ. «Կ. Արձագանգ» ի: Գիճ 3 դահեկան :

Կը վաճառուի Բերա, Պայրամ փողոց Թիւ 5

Կալաթա, Սեդրոս խան Մխիթարեանց գրատունը :



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹ-ԱԹ-ԵՐԹ

Չորրորդ տարի ⑧ 8 Օգոստոս 1914 ⑧ Թիւ 159

«Մերական Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կարողիկէ Աւճազանց շաբաթաթերթը շա-
բաթական Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
տարէ, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մերական Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաթերթը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Կամակ Կարդ. Մերի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Ի. Թերզեման Հայ-Կարողիկէ Պատրիարք Կիլիկիո
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուսմամարտ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ԱԿՋԲՈՒՆՔՆԵՐ

ՊԵՏԻ Է ԸԼԼԱՆԻ ԳԵՐԱԶԱՆՑՈՐԷՆ ԿԱԹՈՂԻԿԷ

Ա.

Ամէն բանի մէջ կը փափաքինք առաջին
ըլլալ. կ'ուզենք փայլիլ գիտութեամբ, զիր-
քով, ազդեցութեամբ, գրական ու մտաւո-
րական ձիրքերով, և եթէ հնար է՝ նոյն իսկ
նիւթական ճոխութեամբ ու պերճանօք:
Տկար բառը խոտելի է մեզ յամենայնի, և
միջակութիւնը կը խոնարհեցնէ զմեզ, ու
այն աստիճան կը վիրաւորէ մեր արժանա-
պատուութիւնը, որ չատ անգամ կը նախըն-
տրենք բան մը չըլլալ ամենեւին քան ըլլալ
միջակօրէն:

Բայց զարմանալի հակասութիւն, կայ
յաստիս վսեմ բան մը, որոյ մէջ փայլելու,
գերազանցելու չենք ցանկար բնաւ, և յո-
րում տկարութիւն և միջակութիւն ո'չ միայն
չեն վիրաւորեր զմեզ, այլ և պարտուց տիտ-
ղոս մը գոգցես կը յօրինեն մեզ. «Կրօնքն է
այն»:

Գիտեմ թէ ամենայնիւ կրնան զեղծանիլ
մարդիկ, նոյն իսկ կրօնիւ: Եւ այս զեղծումը
յառաջ կը բերէ կրօնամոլութիւն, որ ամօ-
թալի, աղիտաբեր ու խորշիկի է միշտ. և
եկեղեցին առաջինն է զայն դատապարտե-
լու, ուր և հանդիպի այդ չարագործ հրէշին:

Բայց ինչպէս որ չովէնութիւն և ազա-
տամոլութիւն պատճառ մը չեն հայրենասէր
և ազատասէր չլինելու, նոյնպէս և կրօնամո-
լութեան անուելի դէմքը չի կրնար ու չի պար-
տիւր ծածկել մենէ կրօնասիրութեան երկնային
զեղեցկութիւն և հրապոյր:

Եւ որովհետեւ հակառակ շովէններու և հակառակ ազատամոլ լիբերու, կը տենչանք առաջին ըլլալ հայրենասիրութեան և ազատութեան մէջ, կը հարցնեմ թէ ինչո՞ւ չպիտի բաղձանք առաջին ըլլալ կրօնասիրութեան մէջ հակառակ կրօնամոլ խուժողութիւններու:

Չարեր ու աղանդաւորներ թո՛ղ զեղծանին՝ որչափ կ'ուզեն՝ կրօնքով: Ինչքա՞նք համոզուած ենք թէ երկնից թանկագին պարգեւն է այն, համոզուած ենք որ անհատն, ընտանիք և ընկերութիւն կը կարօտին անոր, թէ նա մեզ ցոյց կուտայ հանապազ մեր պարտուց լուսաշաւիղ ուղին, կը սանձահարէ մեր կրից ալիքներն ամենի, լոյս կուտայ մեր աչաց և ոյժ մեր սրտին, կ'առաջնորդէ յաւէտ մեր խղճին, որ առանց անոր իբրև նաւ մը անդեկ, կայմաբեկ պիտի թափառէր հակընդդէմ կարծեաց ու յարածուփ մոլորութեանց ովկէանին մէջ:

Դիտենք վերջապէս թէ կրօնքով է որ կը լինի աշխարհ պարտէզ մը բուրումնաւէտ, ծաղկազուարճ ու պտղալից: Իրմով է որ կը նուազին ընդհանրապէս ապականութիւն և անիրաւութիւնք, և մարդկութիւնը կը լինի աւելի մաքուր ու համեստ, ազնուամիտ և ժուժկալ:

Ճշմարիտ, ուղղափառ կրօնքն այն բանալին է ոսկեղէն որ կը բանայ մեր առջև բարոյական բարձրութեան դուռները բոլոր: Փրանսացի հեղինակ մը ըսած է կորովամիտ անկեղծութեամբ. «Երկիրն յորում կ'ապրինք երկիր մըն է այլոց նման... կրօնքը զոր ունինք՝ կրօնք մը չէ այլոց նման»:

Արդարեւ հին ու նոր բիւրազան կրօնքներու մէջ միակ անմոլար, աւիտեանական կրօնքն է այն. կը սկսի երկրաւոր գրախտին մէջ և մինչև աշխարհի վերջին օրը անբաժան ընկերը պիտի ըլլայ ժարդկութեան: Եւ որովհետեւ աստուածային է, իր մէջ ունի գեղեցկութիւն, վեհութիւն, իմաստութիւն, գիտութիւն, շնորհք. սոսութիւն, ի մի բան՝ ամէն բարիք: Ինչ որ բարոյական և գերբնական տեսակէտով ամենէն աւելի նկատու է մարդոյն, կը բովանդակուի կա-

թողիկէութեան մէջ: Այս կրօնքն է որ կուգայ ուղղակի երկինքէն, որ կառուցուած է աստուածային խոստմանց անդրդուելի հիման վրայ, եւ որ տիրապէս կ'առաջնորդէ ազգաց եւ թագաւորութեանց:

Անոր դարձած են երկնից գուրգուրանքը եւ դժոխոց կատաղութիւնը, սուրբերուն սէրը եւ պիղծերու ատելութիւնը: Նա կ'անցնի դարերու մէջէ ամէն անօրէնութեանց դէմ կռուելով եւ արդարութեան յաղթանակին համար զոհուելով: Բարոյական աշխարհի արեւն է նա, առանց անոր չի՛ք կեանք եւ ջերմութիւն:

Քաղաքակրթութիւն, օրինաւոր տղատութիւն, հանճար, գեղարուեստք, ուղղութիւն, մաքրութիւն, խիղճ ու բանականութիւն կը խոնարհին յարգալիք անոր առջև: Տգիտութիւն, նախապաշարմունք, չիրք, իմաստակութիւն, ամբարտաւանութիւն, նեղ եւ սուտ, բռնակալութիւն եւ բարբարիկ յետադիմութիւն յոտից ցզլուխ զինուած են անոր դէմ:

Ինչ որ կայ վատութիւն եւ նուաստութիւն աշխարհի հինգ մասանց մէջ, երդուեալ է թոյն ու ցեխ արձակել անոր դէմ: Հին ու նոր դարերու մէջ ինչ որ կայ ամենէն ազնիւ ու առաքինի՝ սիրած է աշխատանիլ անոր մայրազորով թեւերուն ներքեւ: Հանճարներն նուիրած են անոր իրենց խօսքն ու գրիչը ոսկեղէն, սուրբերը նուիրած են անոր իրենց սիրտը մեծահարուստ սիրայորդ, եւ մարտիրոսներն նուիրած են անոր իրենց արիւնն խնկահոտ եւ հրաշալիօրէն արգաւանդ: Ինչ վսեմ անուններ կրնան յիշուիլ Ս. Ոսկեբերանէ եւ Ս. Օգոստինոսէ մինչեւ Ս. Թովմաս Ապոլինացի, Ս. Բոնավէնդուրա եւ Պոսիւէ, Ս. Գրիգոր Նարեկացիէ եւ Ս. Ներսէս Լամբրոնացիէ մինչեւ Ս. Փրանկիսկոս Սալէզեան, Ս. Ալփոնսոս Լիկուորի, Ս. Պօղոս Խաչեան, Ս. Բեննարդոսէ եւ Ս. Դոմինիկոսէ մինչեւ Սրբուհի Թերեզա, Սրբուհի Մարիամ Մագդաղինէ Բացեան, Ս. Իգնատիոս տը Լօյօլա, Վիանէ եւ Էմար, Ս. Պողիկարպոսէ եւ Ս. Յուստիանոսէ, մինչեւ երանելիներն Գաբրիէլ Բէւպուար, Պետրոս

Շանէլ, Թէոֆան Վէնար եւ հրաշալին Տէր
Կոմիտաս Բէօֆիւրճեան:

Կը բաւէ գիտնալ քիչ մը լրջօրէն քրիս-
տոնէութեան պատմութիւն՝ զմայլելու համար
անոր հրաշալի ու աննման վառքերուն վը-
րայ: Արդարեւ ամէն դար ու ամէն երկիր կու
գան նոր անուններ յաւելուլ անոր գիւցա-
զանց շարքին. եւ ներկայ ու ապագայ ջա-
տագոյններ միշտ իրաւունք պիտի ունենան
կրկնել ժողէֆ տը Մէսգրի հետ. «Ո՛վ եկե-
ղեցի կաթողիկէ, քե՛զ կը վերաքերին մեծ
մարդիկ:»

ՎԱՆԱԿԱՆ

26 Յուլիս 1914

ՀԻՆ ՎԱՍԵՐԱԹՈՒՂԹԵՐ

Օ Ր Ա Փ Ի Ր

ՄԵԾ ՀԱԼԱԾԱՆՔԻՆ

ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՑ ԻԷՄ
(1827 — 1830)

Չարեանպա Փեթր. — 22 Փաթրիք վէքիլի
Չուհանը խանընտա քուլումճուլարըն լոնճա
օտաւընա վարդպ հապէր վէրիյօր եարընքի
կիւն սաաթ իքիտէ Բուլքարուտա Երուսա-
ղէմ էվինէ թօրլանսընլար, հէր էսնաֆտան
10ար քիշի. օքունաճադ ֆէրման վար, լա-
քին պու ալըն իպթիտաւընտան չօք գաթօ-
լիքէր պաշլատըլար Իսթանպօլտան ֆիրար.
Իթմէյէ. քիմի ադ տէնիդէ քիմի քարա տէ-
նիդէ օդուլ ուշաղը իլէ. պիր թազըմլարը տա
ֆրէնկ հանէլէրինէ իզպէկ եէրլէրէ կիրիշիպ
սաղլանդըլար վէ թէպտիլ գըլըկ օլտուլար:

Բեքեհնպէ 23. — Հէր էսնաֆտան ճէմօլ-
տուլար Բուլքարուտա Երուսաղէմ էվինէ:
Փաթրիկ տէֆա պիր ֆէրման օգուտու, մէ-
ֆումու պու. Նէ քատար էնգարէ միսիլլի
մայրապետ վար ըսա՝ կէրէք Ասիթանէլի կէ-
րէք թաշրալը 3 կիւնէտէք Պանտրմա իլէ
Մուհալլըճա սիւրիւլմէլի, հաշան Փաթրիէ
իթաաթ չթմէզլէր իսէ հէր պիր խուսուտա

տէյէլիմքի թաշրալը իմիշ, քէնտի վէթա-
նընա վարսըն իթաաթ էթմէյինճէ. պուլն-
տան մատա Ղալաթա, Պէյօղլու վէ Պօղազ
իշի ճիվարլարընտա տաշա պուլունան վար
իսէ, կիւճիւ եթէնի կէօշիւն դալտըրսըն ի-
զին օլան մահէլլէրին պիրինէ. մաղտուր օ-
լանլար տա՝ պանա կէլսինլէր, հալլէրինի ի-
ֆատէ իթսինլէր, ճուլարա տա պիրէր ազ սա-
տազա վէրէլիմ. կէրէի վէրտիլէր ամա պիրէր
12լիք առաւ պաշընա. վէ 3 կիւնէտէք քիմսէ
գալմամալը էվլէրտէ, վէ պու խուսուտա առէմ
թային օլմուշ տուր սէմթինիդէ. վէ չըքտը-
ղընըզտա էվլէրին անահաւարլարընը ճուլարա
թէսլիմ իթմէլի. զիրա պու կիւնտէն սճարա
պաշլանտը գաթօլիք էվլէրի մէզաթ օլմազա.
կէրէք ժամա կիտէնին վէ կէրէք կիթմէյէ-
նին, ֆազաթ պազըլարըն էվլէրի թարաֆի-
յէն օլտուլունտան սաթըլմատը. նիճէ Ալ-
լահվէրտեան Նազարէթ աղանըն 4 եօլ աղ-
ղընտա օլան էվի, Ղալաթատա Մուլիանէ
տըչընտա պիր էվ, պուլնլարտան մատա պիր
գաշ էվլէր տէ սաթըլմատը, սիւրէթէն էր-
մէնի տօթլար սահապ օլուպ, ալտճազըլըզ
էվին սահիպինտէն տէյէրէք մէքս էթտիր-
տիլէր սաթըլընը:

Ճուլմաա կիւն 24. — Փաթրիք պաշլատը
եէնի թարզ ըէզալէթ չըքարմաղա, էվլէրէ
կէօնտէրտի պիր թազըմ տէրտէլլէր, ժամ-
կոչլար, վէ մահալլէ քէհեալարը, մայրապետ
արալըպ թուլմազա. պու տրատա կիտէնլէ-
րին իտտիկի խըեանէթլիքլէր պաշտան աշ-
տը. չիւն մայրապետ արարքէն, պաշլատը-
լար եաշլը քըզլարըն, կէնճ տուլ քարըլա-
ըն պօյունլարընա լալէ թաքըպ սիւրիւթ-
մէյէ վէ բըսվալըղըլա Փաթրիքհանէյէ կէօ-
թիւրմէյէ. օլտու քի պազը քիմէսնէլէր վա-
ըպ սահապ չըգաղքատա թուլմուլանլարա,
ճէվապ էտտի Բաթրիք, չիւն պուլնլար մայ-
րապետ տէիլլէրսէ՝ նիշին տիւնեանա կիր-
մէմիլլէր էօլէ իսէ պուլնլար մայրապետ սա-
յըլըլար. էն սճն պիլտիքտէ ճուլարըն մայ-
րապետ օլմատըղընը. խօստովանանքա տա-
վէթ իթտի. վէ պու ուսուլ իլէ պազըլարը-
նա մէրամընը եիւրիւթտիւտէ՝ էօլլէճէ օլլի
վէրտի. վէ մայրապետ լաֆըլ իլէ Մուհալլ-

Handwritten signature or note.

ճա սիւրիւլէնէր 12 քիչի օլտու: Իւքին Եւայ մայրապետ 2 ինճի Պուրսալը Սաքա Օհաննէսին քրդ քարտաշը, 3 ինճի Մաղաքեան Թէոքիլէ քրդը Թագուհի մայրապետ, 4 ինճի Բաֆաֆ քրդը Թաքուհի, 5 ինճի Մաղազաճընըն քրդ քարտաշը Բրաքիօն, 6ընճը Չուհաճընըն քրդ քարտաշը Չիլիկայ, 7ինճի Հալէպլի քարտաշը Երանուհի քատըն, պու աղուհալը վերէնէրին պիրի իտի, 8ինճի Սըվալը Խամճը Արթին քրդը Լուցիա մայրապետ, 9ուհաճու Մնացականեան Հոփիսիմէ, 10ուհաճու Սըղըր Ակօբուն քրդը Տուտու, 11ինճի Մարիանէ քատըն, 12ինճի աւտը պէլլիսիդ պիրի:

Պանտրմայա սիւրիւլէն մարապետէր վէ տուլ գարըլարըն խիմէրի պունլար տըր: Բիւրքճիւ Պետրոսըն քրդը Լուցիա, տիւտիւկճիւ Ճերմակ օղու Սիմքէշ Անդրէասըն քրդը Թագուհի, Մանիկ օղուլարընըն ապլալարը 3 քրդ քարտաշ Սրբուհի, Սուլթան վէ Կատարինէ, Չամիչեան Իսկուհի գատըն, Իփէքճի Օթուու թէյլէսի Սիմա ապլա, քէօր Պօղոսուն քրդ քարտաշլարը Չիլիկա վէ Լուչիա վէ Մէյրէմ, Բապարաճը Կարապետին էլի քի Հայր Բիրքորուն վալիտէսի իտի, Շօփիլայ Մէյրէմ քատըն տուլ քարը, Տիւրկէր Յուսէփին քրդը Պիրիճիկ, Սիւտանա Մարիամ գատըն վէ քրդ քարտաշը Հէքիմեան Վերնիքայ, Սաղապզարըն քրդը աննա Սողոմէ Մարապետ, Աստարճը օղու գուլումճու Օհաննէս քրդը Անէթա, միանճը Կարապետին քրդ քարտաշը, Սիմքէշ Անտոնուն քրդքարտաշը Սրբուհի տուտու, Բամպուքճուհուն քրդ քարտաշը, Չէվրէճի տուտուն քրդը Իսկուհի, մարապետ ուստա Թագուհի, Պօլ փաչանըն քրդը Սրբուհի տուտու Իյնէճեան Տիրուհի մարապետ 2 քրդ քարտաշ թէրդէ գատընլար, Լաղ օղունուն քրդը Թերեղիս տուտու, Բարա Պօղոսուն էվլինտէն պիր քարը, Լուս մարապետ, Այարճընըն մարապետի, Կուրճի Պօղոսուն քրդ քարտաշլարը Մէյրէմ վէ Տիրուհի, էն սօն թէրդի Թումանըն քրդը:

Պու սիւրիւլէնէրտէն 2 քիչի պէլլի օլտու, չիւն եէքիւնիւ 38 ճան ըտը Պան-

տրմայա կիտէնլէր: Պու կիւն Փաթրիկ արդուհալ վէրէն քարըլարտան պիրինի նարըտան աղատ էթիսի, օքի Շամուանճընըն Կատարինէ գարըսը իտի, վէ հիւնքեարա քէհատը ուզասըլ պաղըրան¹:

(Շարուհակելի)

¹ 22 Դշ.— Այսօր Պատրիարքէն խապար կուգայ չուխաճը իսանը Լօնճա օտապին որ վաղուան օրս ամէն էսնաֆէն հինգ հոգի Երուսաղեմայ տունը գաւն, դէրէ թուղթ կայ կարթացուելու:

23 Եշ.— Ամէն էսնաֆէն գացին Երուսաղեմայ տունը. թուղթը սկսան կարթալու, մեֆուճը այս էր. «Հէր նէ գըտար Անկարէ միսիլի մայրապետ վար ըսա, կէրէք պուրալը վէ կէրէք տըշարը, իւլ կիւնէ գատար Պանտըրմատա մահալլաճա սիւրիւլէն մէլի տիրէր եւն. եւն. Երկրորդ կ'ըսէ Պատրիարքը պաղի Պէշ Օղլու Ղալաթիա մապողնէր կան, ըսէք անոնց ելլան տներնէն եւ երթան հրաման եղած տեղերը տուն բռնեն եւ իրենց տանը բալիքներն ալ տանին Վօյվոտայի խօնալը ձգեն. էկէր կ'ըսէք քի մապողը աղքատ մարդիկ են, ստակ չունին նէ տեղերնէն շարժին, ես աղգին կողմանէ կ'ըսեմ, թող անոնք ելլան տեղերնէն, մենք անոնց ողորմութիւն ալ կուտանք: Կէնէ այս բանովս ալ չեղան, բայց պաղիները աղքատներէն թէսքէրէ ուզելու գացիննէ, ըսին. Հայր Սուրբ մենք ստակ չունինք, մեզի ստակ տայիք պիտոր. հանեցին մարդ գլուխ մէյմէկ տաս երկուքնոց տուին, եւ էսնաֆներէն ըրճայ ըրին Պատրիարքին թէ արգուհալ տուող կնիկները թող տան տէյի:

25 Ուրբաթ.— Ահա քեզի նորէ ինոր կերպով եւրէզալէթով մարդ վերցնել, տերտերները ու ժամկացները ձեռուընին լալէյօվ, մահալլէ քէհեապիյօվ տունները կոխել, մայրապետի պատճառաւ տուլ կնկտիք եւ տարիքը առած աղջիկներ վերցնել. մեշերնին ծերեր կար որ կարող չէին քալելու, համալի կրնակ տալով կը տանէին, ամէն աղգ տեսնելով հայհոյանք ընելով կը նայէին թաճիւկ ընելով կ'ըսէին աս ինչ բան է հայք կ'ընեն կոր ուշատին գեղերէն մարապետ կը վերցնէին կը տանէին ան տեղի ժամը, ան գիշերը բանտի պէս կը պահէին ժամկոցին օտան, յետոյ առաւօտուն Պատրիարքարանը կը խալէին, կէօյա այս կնկտիք մեր վարդապետներուն սիրականներն են կ'ըսէին: Պատրիարքին ամէնքը աս տեղը մէկ տուն մը պահեցին, շատին թէքիֆ ըրին Սուրբ աթոռին հնազանդ եղիք խոստովանեցէք ձեզ թող տանք, մեշերնին պաղըսին ըլլալով թող տուին իուսուըն ալ աքսորեցին մահալլաճ, որք են այսօրեկ 10 հոգի, Եվա մարապետ Սաքըղ Յովհաննէսին քոյրը, Թօսփիւեան Թագուհի, Թագուհի Խաֆաֆի աղջիկ, Մաղաքճիին քոյրը Փրափիոն, Չուխաճիին քոյրը Չի-

չիւիա, Հաւէպլիյի կնիկ երանուհի խաթուն, որ ար-
դուհաւ տուողներուն մէկն էր, Խաւճիին աղջիկը
Լուցիա, Մնացականեան Հովսիսմէ, Սըղըր Ակոբին
աղջիկը Տուտու եւ Մարեանէ խաթունը:

Պանտրա գացողներուն անունները որ 38 հո-
գի էին, որք են այսօրիկ. Բիւրքճի Պետրոսին աղ-
ջիկը Լուցիա, Հաւէպլի երանիկ գառուն որ աս էր
արդուհաւ տուողը, Տիւտիւկճիեան աղջիկը Թաւու-
հի, Մանուկ օղլուին ապլաները երեք քոյր Սըր-
բուհի, Սուլթան, Կատար, Չամիշեան Իսկուհի խա-
թուն, Իփէքճի Օգոսին աղջիկը Սիմա աբլա, Կուր
Պողոսին քոյրը աղջիկները Ջիշիւիա, Լուցիա, Մեր-
եմ, Խապարաճեան Հայր Գրիգորին մարը՝ Տիրա-
մայր եւ տղան Հաճի Աւետիքը, Շայինա Մէրեմ
մայր եւ տղան Հաճի Աւետիքը, Պերիճիկ, Սիւ-
տանա Մերիմ գառունը եւ քոյրը միատեղ, Հե-
քիմեան Վերոնիքա, Լոյս մայրապետ, Սաղփապար-
եան Աննա, Սողոմէ մայրապետ, Փապուհիին քոյրը,
Ջիւրիճի Տուտուին քոյրը՝ Իսկուհի մայրապետ,
Ուստայ Թաւուհի, Պոլ Փաշային աղջիկը Սըբուհի,
Իյնէճեան Տիրուհի մայրապետ, Թէյլէ Գառուն երե-
կու քոյրը, Սըմաքէշ Անտոնին քոյրը Սըբուհի, Խա-
րա Պողոսին տունէն մէկ կնիկ մը խուլ Իսկուհի,
Այարճեան մայրապետ, Կուրճի Պողոսին քուրերը
Մէյրեմ, Տիրուհի, Թէրզի Խովմային աղջիկը, եւ
ասոնցմէ զատ երկու քոյր, Տիրուհի մայրապետ
Բէօթահեան եւ քոյրը Բէօթահեա քոյրերն:

Ինճիճի Թովմային տղան աղտիկը, Էր կինով
եւ քանի մը մարդ ուրիշ աս բաներէն վախճալով,
Սեվ ծով նստով փախչելնին բռնուեցան տարին
փաշային դուռը, փաշան հարցուց Թէ ինչո՞ւ կը
փախչիք կոր, ասոնք ալ ըսին. Էֆէնտիմ սիգէ խի-
լաֆ օլմազ, հիշ քայլը պիւր շէյ Էյին տէյիլ դաշ-
մամըզ իլլա Բաթրիյին էլինտէն գաշայօրուզ քի
պիզի սիւրմէսին, զիրա փարամըզ եօք քի գազա-
ղա վէրիկ տէ սիւրկիւնէ կիտէլիմ, հէր պիւր Թիւր-
իւ Բաթրիյէ իթաաթըմըզ վար, անձաք էֆէնտիմ
այնըմըզ տէյիշտիւրէմէիզ օնա պիեաթ էտիպա».
Կ'ըսէ փաշան. «Էյ բարանըզ եօղսա, կիտէճէյինիզ
եէր պապանըզըն մէմէքէթի տէյիլ եա, օրատա
բարատը նասը կէշինէպիլիսինիզ». Կ'ըսեն ա-
նոնք. «Էֆէնտիմ նէ եափալմ բարատը տաղա-
րըն պաշընա կիթմէք իսէ, պարը սիւրկիւնսիւզ
զարուրէթ չէքմէք էյի տիւր» յետոյ ինճիճին տը-
ղուն կինը Պատրիարքարանը խաւրեցին, անկից ալ
Թող տուին, զինքը միշտ աղա բանտը դրին ա-
յախտաշներովը, անկից ալ Տիմիթտօքայ քոյրեր-
ցին:

Եւ այս միջոցի մէջ շատ մարդ ֆամիլիայով
Սեւ ծով ձերմակ ծով փախան, եւ շատերն ալ
էրիկ մարդ, կնիկ մարդ աղջիկներ ֆրէնկի տու-
ները պահուեցան եւ ժամերն ալ շատ մարդիկներ
կար պահուած, ասոնց մէջը շատ մարապետներ
կար, որ առաջ անունին Պատրիարքարանը դըր-

ուած էր, հիմայ բնուեցին չի գտան նէ իմացան
որ Ֆրանկաց տուները պահպնուած են, ասոր հա-
մար դուռն հասկցուցին սապէս սապէս պահուած
շատ մարդիկ կան, ընթիւ էֆ.ն մարդ խաւրէ տու-
ները կոխելով հանէ որ աքսորուին, տէրութիւնը
այս բանս չըրաւ ինչ մտածեց չիյտմ. բայց կըր-
նամ ըսել այս մտքով չըրաւ, ամէն տէրութեան
պիտի դաշի, ու շատ արպէտէ պիտի ելլայ, այս
բանս մտածելով չըրաւ, նայէ Հայոց կատաղու-
թիւնը Թէ ի՞նչ տէրէճէ է, տէրութիւնը քիշ մը
կը մտածէ կոր, ասոնց քովը ան ալ չի կայ:

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԷԻ

ՀՈԳԵԻՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆԻՆԻՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԳՐԲԷՆ

Գրիգ. Ա. — Դ. Ի. Բ. — Մարգարէի քուրաքանչիւր
խորհրդածելու վրայ: (Շար.)

Ո՛վ անմիտ եւ անհաւատարիմ սրտի, որով ա՛յն-
չափ խոր ընկզմած եմ երկրաւոր քաներու մէջ, որ
միւս՛յն մարմնաւոր քաներէ համ կ'առնուի:

Բայց թշուառականներն ի վախճանի շուք յա-
ջի գգան, թէ ո՛րչափ անարգ եւ ոչինչ քան եր' գոր
սիրեցին:

Իսկ Աստուծոյ սուրբերն ու Քրիստոսի չեղեղանդ
քաղկականներն կարեւորութիւն յօռին այն քաներու ո-
րով մարմնոյ հաճելի էին եւ ոչ այն քաներուն որ
այս ժամանակիս մէջ ծաղկեցան. այլ անոնց ամբողջ
յոյան ու դիտումն եր' զիմեջ երկնաւոր քաղիքներու:

Իոյոր իրենց փափակն կ'ուղղուէր ի վեր, անանց
եւ անսեռանցի քաներու, որպէս զի մի' գուշէ օկում-
նիցս սիրով ձգուին սօսին քաներու:

Ո՛վ եղբայր, հոգեւոր քաներու մէջ յառադդիմ-
յու յոյսդ մի' կտրէ երբեք. զի ունիս ժամ եւ ժա-
մանակ:

Ս. ԻԳՆԱՏԻՈՍ ԼՈՅՈՒԱՅԻ

1539ին Հռոմի մէջ ստատիկ սղութիւն եղաւ
Փողոցները լեցուն էին աղքատներով որ անթոռութե-
նէ կը մեռնէին եւ քաղկաստեղծով երթալու դռնէ
գուռ մուրալու ուժ անգամ չունէին: Մեր սուրբ
քահանայները անոնց օգնելու ձեռնարկեցին: Զանազ
գրկելով կամ շաղկելով իրենց տունը տարին. եւ եր-
կար ատեն, անոնցմէ շատ հարիւր հոգիի շափ կե-
րակեցին, պատապարհեցին, խնամեցին՝ օշոնութեամբ
նախաճառման ձեռն որ իրենց առատօրէն պարգեւեց
տոյքան մարդասիրական գործի մը համար պէտք ու-

դած ուստեսը զգեստը և դրամը, Այս քառի օրինակը, քաղաքին հարուստներուն գլխութիւնն արթնցուց, այնպէս որ սովին երեսէն յետին խեղճութեան մասնուած երեք, չորս հազար հոգիի տարուստին համար բաւական հիմնադրամ մը կազմեցին: Հոգեւոր օգնութիւնները՝ մարմնաւոր նպաստներուն միացան, եւ աղքատները այս սովէն շատ օգուտ քաղեցին, որովհետեւ մեր սուրբ քահանաները անոնց ուսուցին բարոյականութեան սկզբունքները և սովեցուցին աղօթել, խոստովանել եւ բարեպաշտօրէն ապրել:

1540, Սեպտեմբեր 27ին Պօղոս Գ. հաստատեց Իգնատիոսի ընկերութիւնը որ կոչուեցաւ Ընկերութիւն Յիսուսի որովհետեւ անոր գորշին տակ և անոր մասնաւոր օգնութեամբ պիտի աշխատէր հերետիկոսութիւնները զսպելու, և ուղղափառ հաւատքը եւ բարի վարքը վերահաստատելու քրիստոնէութեան մէջ: Այնուհետեւ առաջին գործերնին եղաւ ընտրել ընդհանուր մեծաւոր մը, որ կանոնին տրամադրութեանց համեմատ, մշտնջենաւոր և բացարձակ իշխանութեամբ ծննդած պիտի ըլլար: Իգնատիոս ընտրուեցաւ, բայց հրաժարեցաւ: Բայց խոստովանահայրը ստիպեց գինքն որ ընդունի:

Ուստի իր դաւաններուն փոփաքին տեղի տալով հրապարակաւ ուխտեց աղքատութիւն, սղոյխութիւն, հնազանդութիւն, եւ ամէն առաքելութեանց համար Ս. Աթոռին հնազանդութիւն, և հրապարակութիւն: Յետոյ միւս կրօնաւորները նոյն ուխտերն ըրին իր աւելելու: Տարբերութիւնը աս եղաւ որ ինք անմիջապէս Յիսուսի՝ Բերտոսի փախտորդին իբրեւ իր մեծաւորին ուղղեց իր խոստումը, իսկ իր ընկերները խոստումն իրեն ուղղեցին իբրեւ իրենց ընդհանուր արքային և գլխոյն: Իր արքայութեան առաջին գործը եղաւ՝ քառասուն օր տղոց քրիստոնէական վարդապետութիւն սորվեցնել իրեն յատկացուած Տիրամայր Տէլլա Սգրադա եկեղեցւոյն մէջ: Անհաւատալի կերպով մեծ եղաւ այս քարոզութեան արգելիքը: Իր օրինակին հետեւելով Ընկերութեան մեծաւորները երբ պաշտօնի գլուխ անցնին քրիստոնէական վարդապետութիւն կը սորվեցնեն: Յետոյ իր նոր հաստատած կարգին բարեք վարչութեան համար կարգադրութիւններ ըրաւ որոնց մէջ Աստուծոյ Հոգին, իմաստութեան և սերութեան Հոգին, հիմնադիրներն երեւան կաւ դադ:

Կարելի չէ արժանապէս նկարագրել ոչ այն յառաջդիմութիւնը որ այս Ընկերութիւնը ըրաւ աշխատելու ամէն կողմերը և ոչ այն թանկագին ծառայութիւնները որ ամբողջ քրիստոնէութեան մաստոյց ուրբան արգելաւոր մեծաւորի մը վարչութեան տակ: Ս. Յրոնջիկոս Քաւեբեհան զրկուեցաւ շեղարարան, որուն առաքելաբէր եղաւ և ուր անհամար հոգեւոր գործի բերուաւ: Այս յաջող առաքելութեան մէջ անոր օգնելու համար զրկեց Սուրբ Իգնատիոս ուրիշ շատ ընկերներ, ասոնք ևս անըմբռն-

ներէ բարեքներ ըրին ոչն բարբարոս երկիրներուն մէջ որոնց դարձը և քաղաքակրթութիւնը առաջ անկալելի կ'երեւէին: Լաւթերականաց հերետիկոսութիւնը որ Գերմանիոյ մէջ այնքան աւել կը գործէր, մզեց այս սուրբ մեծաւորը հան զրկելու իր բնաւոր աշակերտներէն երեքը, որպէս զի ընդդիմանան անոնց ժանտ վարդապետութեանց: Ասոնք պատճառ եղան շատ մը կաթողիկէ իշխաններու և քաղաքներու հաւատքի մէջ հաստատ թալան: Երբ Տրիդենտեան ժողովքին գումարեւոր որոշուեցաւ, Քահանայապետը ուղեց որ իր կողմանէ իբրեւ աստուածաբան հոն գտնուէին Յիսուսեան Ընկերութեան իրկու կրօնաւոր, Հ. Հ. Յակոբ Լայնցը և Ալփոնսա Սայմէրոնը: Գերմանիոս քանուոյ Հայրերէն մին ևս, Գլաու լը ժէ, ներկայ եղաւ ժողովին իբրեւ պատուիրակ Աւկապուրի եպիսկոպոսին: Այս երեք կրօնաւորները իրենց համարութեամբ և վարուեց արքութեամբ ամենուն հիացման արժանի եղան: Այս նոր լոյսին մասնակից եղան նաեւ Ափրիկէն և Սմերիկան: Սուրբ հաւանեցաւ որ իր կրօնաւորներէն մին Եթովպիոյ Պատրիարք ըլլայ: Բայց բնաւ թալ չտուաւ որ իրեններէն մէկը եպիսկոպոս կամ կարգինալ ըլլայ: Ներպայի մէջ, թէ և շատ աղաչեցին և թախանձեցին իշխանները, կայսրը և նոյն իսկ Քահանայապետը. որովհետեւ այդ մեծութիւնները կը նկատէր իրեւ վտանգ ամբողջական քանդման իր Ընկերութեան: Իտալիոյ, Սիկիլիոյ, Սպանիոյ, Բորնոյէպի և Գերմանիոյ մէջ իրեն տուէր վանքեր, վարժարաններ, ընծայարաններ, որոնք նոյն տեղերը վերստին ծաղկեցուցին բարեպաշտութիւնը և գիտութիւնները: Վերջապէս իր տանուհին տարուան մեծաւորութեան միջոցին, ուրախութեամբ կրցաւ տեսնել որ իր տնկած որթը ճիւղերը կը տարածէր ծովերէն ալ անդին, և մինչեւ բնակեալ աշխարհի ծայրը:

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՄԻԳԱՄԱՆՆԵՐՈՒ ԴԱՍԸ.— Երկինքի կամարին վրայ մարդեր կան ուր աստղերը դիպուած կ'երեւին. տեղ տեղ այնքան խիտ են որ երբ պարզ աչքով նայուի սպիտակի դարնող բիծ մը միայն կը տեսնուի: Ուղղեցէ՛ք դիտակ մը դէպի նոյն կողմերը և աստղերու սերմնարան մը կը տեսնէք:

Բայց երբեմն դիտակներն ալ անկարող են որոշ կէտեր երեւան բերելու. այս պարագային՝ արատը կը կոչուի միգամած:

Հինները կը կարծէին թէ զօրաւոր գործիքներով կարելի պիտի ըլլայ լուծել բոլոր միգամածները. ասկէ ծագած է լուծելի և անլուծելի միգամածներու բաժանումը:

Բայց հարցը աստիճան երեւցածէն աւելի կնճռու է և շատ չանեկան է հետեւել այս երկնային առարկաներուն մասին տեղի ունեցած գաղափարներու ընթացքին :

Դիտակի միջոցաւ գտնուած առաջին միջամածը, որ պարզ աչքով ալ տեսանելի է, Անդրոմեդի միջամածն է : Եւ սա պարափաներուն մէջ գտնուած է . 1608ին Ֆրանսֆոն — սիւր-լը-Մէժոնի աշխատային մեծ տօնաւ լաճառին ատենն էր . Ֆուխս սը Պիլնպախս զօրավարը, որ ուսողութեան սիրահար էր, Պելճիգացի վաճառականի մը քով տեսաւ նորահար գործիք մը, որով հեռաւոր առարկաները կը մօտեցնէին խոշորցնելով :

Ֆուխս մէկ կողմէն կը սակարկէր, որովհետեւ կազմածը շատ սուղ էր, միւս կողմէն անոր յօրինման եղանակը կ'ուսումնասիրէր :

Երբ իր տեղը, Օնոլցպախ, դարձաւ, մեր արուեստասէրը անոր մասին Միմոն Մարթուսի հետ խօսեցաւ . բայց և ոչ մին կըրցաւ շինել այն գործիքը, գոր վերջապէս յաջորդ տարին գնեցին :

Այս աստղաբաշխական գիտակով, որ առաջիններէն է, մեր աստղաբաշխները քնննեցին երկնականարը . և այնպէսով Միմոն Մարթուս գտաւ Անդրոմեդի հոշակաւոր միջամածը որ կը նմանի, կ'ըսէր՝ զիշեր ստեն, հեռուէն, եղջիւրէ լայսերի մը մեջ տեսնուած կանթեղի մը :

Պէտք եղաւ կէս դար սպասել այսօրինակ ուրիշ առարկայ մը երկնից մէջ երեւան բերելու համար : Արդարեւ 1659ին Հուլիէնս կը ծանուցանէ թէ Հայկ աստեղատան մէջ գրտած է շատ աստղեր որոնք գրեթէ կը հալին իրարու, և կարծես թէ ամպի մը մէջէն կը փայլին : Մարդուս այնպէս մը կ'երեւի, կ'ուսելոյնէ նա, թէ երկնից մեջ անց մը կայ որ աւելի պայծառ տեղոյ մը վրայ կը թայռէ . ապիկայ է . այլին միջամածը, երկնի մէջ տեսնուած միջամածը :

1665ին Հէլէնիոս Աղեղնաւորին մէջ գտաւ երրորդ միջամածը . Հալլէյ՝ չորրորդը, հաբաւային երկնականարին վրայ 1681ին, և վերջապէս նոյն տարին, Կոսթֆրուա Քիլը՝

Կինգերորդը : Միահամուռ՝ Կինգ միջամած 70 տարուան մէջ :

Բայց աստղաբաշխներու ուշադրութիւնը այս կէտին վրայ այնպէս դարձած էր որ 1755ին Հագայլ վարդապետը իր հարաւային 10,000 աստղերու ցանկին համար աշխատած ատեն, անոր վրայ աւելցուց 42 նոր միջամածներ :

20 տարի վերջը, Հերշելի հանձարին շնորհիւ, նոյն աստեղուան համար խորհրդաւոր այս առարկաներուն թիւը մեծ համեմատութեամբ աւելցաւ :

Վ. Հերշել զլուսը քսան վայրկեանս սեքօղի մը առկ միւս կը կենար զօրաւոր հեռագէտներուն մէջէն հազիւ երեւցող այս արասները գնեցելու համար :

Այս միջամածներուն գննութիւնը աստղաբաշխին ամենադժուար աշխատանքն է, և ասկէ կը հասկցուի թէ ի՞նչպէս Ե. Հերշել, իր հօրը յօրինած ցանկը վերաքննելու աշխատած ժամանակ յուսահատութեան վայրկեաններ կ'ուռնէր : Չանձնացած եւ աստղերը դիտել, կը գրէր իր հօրաբորջ . կ'ըսէր հեռագէտները ջախջախել եւ հայեթհեթ հայեցնել : Բարեբախտաբար ըսածին պէս չըրաւ և Հերշէլներու աշխատութեանց շնորհիւ ծանօթ միջամածներու թիւը յիսուէն անցաւ 2,500 :

Բայց արդէն աստղաբաշխները համաձայն չէին միջամածներու բնութեան մասին . աստղերու միջոցորտներ են թէ դէպեր, ոչ ոք գիտէր :

Սակայն լուսապատկերական լուծումը մերձեցուած էր աստղերու ուսումնասիրութեան 1824էն ի վեր, և Վ. Հիւկնինս խորհեցաւ զայն գործածել միջամածներու բազադրութիւնը քննելու համար : 1864, օգոստ. 24ին, կ'ըսէ այս աստղաբաշխը, առաջին անգամ լուսապատկերացոյցը կ'ուղղէի Վիշապին մեջ գտնուող միջամածի մը : Դիտելով... Սպասած լուսապատկերս չիւր : Միայն միակ եւ փայլուն գիծ մը : Նախ կարծեցի թէ հասնածակալմի տեղափոխութիւն մը եղած է... իսկ այսպէս քաջատարաբար խախտել երեւան եկաւ :

Արդարեւ աստղաբաշխը պիտէր թէ ամէն հրաշէկ մտաւ միայն լուսապատկեր մը կու

տայ, թէ լուսաստիւն զանգուած մը երբ կազային մթնոլորտի մը մէջէն տեսնուի, ցոյց կու տայ, ընդհակառակն, չարք մը սեւ գէգեր, մինչդեռ լուսաւորեալ կազերը միայն կը հայթայթեն վառ, ուրոյն և շողուն գիծեր:

Ուստի Հուկինս չէր կրնար սխալիլ, մանաւանդ որ աւելի ուշագիւր զննութեամբ մը տեսաւ կապոյտին կողմը երկու ուրիշ փայլուն գիծեր:

Միգամածներու հանելուկը լուծուած էր. լոյսը ինքնին վրան առած էր մեզի պատասխանը զրկել: Աստղերու կուսակում մը չէ այն, այլ յուսաւոր հոսանքի մը:

Այս սքանչելի գիւտը երկինքի աշխարհակալութեան մէջ նոր թուական մը կը բաշար. բայց մեր արդի գիտութեան եզրակացութիւնները չկանխենք:

Լուսանկարչութիւնը, այն գիտունի ցանցամաշկը, հզօր օգնութիւն մը մատուց զննիչներուն:

Հսկայ գիտականներուն առարկայական ապակիները բոլոր երկնային գաւառները հետազօտեցին: Յառաջագահ ռահիբրաներ, Իսահակ Ռուպերթս, Քէլէր, Բիքքէրման, Գեորգ Կարթեյն, Կարդարեցին, հիմայ Մաքս Վոլֆերու, Պառնարտներու, Թիթլէններու ձեռքով, և, պէտք է աս ալ ըսել, շնորհիւ ամերիկեան մեկենամներու առատածնութեան շատ պարզուած է միգամածներու զննութիւնը: Մեր լուսանկարչական ստիտակները, բազմաթիւ, երկար բացամնացութեան միջոցաւ, մեզի ցոյց տուին 200,000 աւելի միգամածներ: Այս թիւը արդի գործիքներու շնորհիւ գոնէ 500000ի պիտի տարուի: Այն մեծ հայելին զոր այս միջոցին կը յօրինէ Տ. Միլլըն, Վիլսոն լեւան Դիտարտին համար, և որ 2 մէր 54 հ. տրամագիծ ունի, մեզի ասկէ աւելի կը խոստանայ:

Ինչ որ ալ ըլլայ, ո՛չ ոք կրնայ չտեսնել մեր վաւերագրութեան շահեկանութիւնը. արդէն ձեռքերնիս ունինք աստղային յեղաշրջութեան հարցին տուիքներուն մեծ մասը և կրնանք դադարաւ մը կողմէ՛ դարերու ընթացքին մէջ նիւթին նիւթարկուած աշա-

գին փոփոխութիւններու մասին: Որովհետեւ այն ալիւս փուլերը որոնցմէ աշխարհները կ'անցնին, իրենց ծնունդէն մինչև իրենց մահը, և զորս չենք կրնար ուսումնասիրել, ժամանակի չգոյութեան պատճառաւ, մասնաւոր առարկայի մը վրայ, ամէն գիւրութիւն ունինք ուսումնասիրելու առաւել կամ նուազ բնաշրջուած տիպարներու վրայ:

Արդ ի՞նչ կը տեսնենք: Ոչինչ որ մօտէն կամ հեռուէն յիշեցնէ Լաբլաօի հռչակաւոր ենթադրութիւնը: Այս առաջնակարգ գիտունը, եթէ այսօր աշխարհ դառնար, պիտի փութար իր գրութիւնը լքելու:

Տիեզերակազմական հարցը իր մանրամասնութիւններովը բոլորովին վերաքննելի է: Արդարեւ միգամածները, ամէնքն ալ, պարուրած և կապէ են. նոյն իսկ անկանոն կոյտերը, ինչպէս Հայկին մէջ, այս յօրինուածութիւնը ցոյց կու տան երկար տարիքաց թողուած նկարատախտակներու վրայ: Միջակէտի մը շուրջը, որ, ձգողական զօրութեամբ, նախապէս հաւաքեր է ցիրուցան նիւթեր, միեւնոյն յատակագիծը իշխած կ'երեւի ապագայ կազմակերպութեան վրայ: Կազերը ամէնքն ալ, երկայն գրութիւններով կ'երթան կը միանան կեդրոնին, բայց առաւել կամ նուազ երկայն պարուրներ ձեւացնելով, մինչև որ, միջոցին ընդդիմութիւնը դադրելով, ամբողջը փոխուի՝ թեւաւորակերպ ուղակներու:

Ի յառաջագոնե տեսութիւններու և ենթադրութիւններու տեղ հարկ է ուրեմն զընել, գիտութեան այս բաժնին մէջ, ինչպէս միւս ամէնուն մէջ, փորձառական տուիքներ: Բայց նախ պատշաճ է դեռ ևս սպասել: Գրեթէ ոչինչ գիտենք նիւթին փոփոխութեանց մասին, արդի գիտութիւնը հագիւ սկսած է ընդնշմարել հիւլէներուն տիրող կնճռոտ մեքենականութիւնը:

Ի՞նչ փոյթ, արդի հեռագիտականներուն հսկայ աչքը տիեզերքի վսեմ ներդաշնակութիւնը կը գտնէ այն ամէն հեռաւոր տեղերը ուր կը հետազօտէ աշխարհներու խորհսերները, աստղային մեծ գիշերուան մէջ

ջէն. որչափ որ գիտութիւնը կը յառաջանայ՝ տեսանելի իրերու հորիզոնը ետ մղելով, մարդկային միտքը այնչափ աւելի ինքզինքը մօտ կը զգայ ոչնչութեան. բայց իր մէջ փայլող աստուածային կայծը կը բարձրացնէ դայնդէպի աներեւոյթ իրերը և անոր՝ մատով շօշափել կու տայ իր Արարչին անսահմանութիւնը:

Թ. Մ.

ԻՐԻՊՈՒԱՆ ԱՂՈՓՔԸ

Ո՛վ Կոյս, առ Քեզ, մութին մէջէն երեկոյեան Դարձնեմ այժերս եւ իմ աղօթք խնամահական:

Քեզ զա՛ն աղօթքս զեղ մեզեղիկ քաղցրահամ:

Ո՛ղջ լեր, Մարիամ:

Ո՛հ, լոյս սիրոյ, քե՛զ՝ որ միշտ իմ վրայ ցոլան Շնորհի արեւն, եւ օրհնութիւն Քո մայրական:

Բնաւ չը տրե՛ մեղի խաւար ծառայիս վրան:

Ո՛ղջ լեր, Մարիամ:

Յառաջանայ զիշտ, եւ կը արթնայ սասան Առիւծի պէս ճօթի, լքուի մռնչիւն ցաւման:

Մա՛յր, ջախջախե՛՛ զայն, անոր զլուխն ամբարտաւան:

Ո՛ղջ լեր, Մարիամ:

Որ չը խռովէ անոյց քունիկս իմ հանգստեան Այն ամբարտաւան արհաւիրքով ցրնարական:

Եւ չը դիւրէ՛ զիս արեւեստով կախարդութեան:

Ո՛ղջ լեր, Մարիամ:

Սուրբ մահճիս մէջ, յագնած դադրած քանի՛ անգամ Որ մայրենի քեւերուդ օակ հանգստանամ, Մայր քաղցրագուրք ու անքիծ, կրկնեմ Քեզ յարձամ:

Ո՛ղջ լեր, Մարիամ:

Բայց մինչ այսպէս հսկանալոյ օակ խաղաղ բնանամ, Քեզ խորհելով սիրաբարբոս սիրտ արդիական Պիտի հսկէ կանթեղին պէս Հաղորդութեան:

Ո՛ղջ լեր, Մարիամ:

Մ. Ծ. Վ. ՄԵՂՄՈՒՆԻ

(Իծայ. քարգմ.)

ՀԱՒԱՏՈՅ ՄԻ ՆՈՐ ՅԱՂԹԱՆԱԿԸ

ԲՕԼ ԼԵՑՎԸՆԿԱՐՏ

Բ.

Ալֆրէտ տը Միւսէէ վերջ սկսաւ կարդալ Իւկօ, Բօլ Պուստէ (որ դեռ հաւատացեալ մը չէր այն ատեն), և ասոնց աւելցուց աւելի փեսասկար հեղինակներ, Վոլդեր, Տիտ-

րօ, Ժ. Ժ. Ռուսօ, Պայրըն, Ժօրժ Սան, Միշլէ, Զօլա, Բիէն Լոգի, Մօրասան, Ռընան, Անատոլ Ֆրանս և այլն: Դարուն վատառողջ հոսանքէն տարուած՝ ֆրանսական դպրութեանց ամենէն թանկագին գործերը չէր կրնար ճաշակել: Վարժարանի մէջ, — կը խոստովանի նա — և մինչև 27 տարեկան հասակիս՝ դասականներն արհամարհեցի: Իւկօ, Միշլէ և արդի կծու, զգայամու և յոգնատանջ գրականութիւնը, Պատլէրի և իր բնապաշտ ու անկապաշտ աշակերտներու գրականութիւնը՝ անկարող կ'ընէին զիս գնահատելու ուղղութեամբ և ճաշակելու իրենց ամբողջ համոզմնէն: Լա Պոլէյէրի մը նկարագիրները կամ Պոսիւէի մը Դամբանականները: Այսօր Ժ. Պարու ամբողջ գրականութիւնը կրնամ առաջ Պոսիւէի գործոց փոխարէն: Անոր մէջ կը գտնեմ ամենէն մեծաշուք քնարերգութեան մը վերացումները, ամենէն հզօր արամաքանութեան պատճառաբանութիւններն, արծուի ակնարկները պատմութեան վրայ, ու երեւակայութեան մը յափշտակութիւնները, և զգայութեան մը սարսուռներն, որոնք սակայն զսպուած եւ կանոնաւորուած են կաթողիկէ և միապետական կրկին աւանդութեանց լուծին ներքեւ:»

Բայց դեռ լուսո՛յ ժամն չէ հնչած, և իր սիրելագոյն հեղինակներն են յոռիներն, որոց հոգեհապան ազդեցութեան ներքեւ կը կորսնցնէ ամէն հաւատք, ամէն վեհ իտէալ, ու կը կրկնէ տխրահռչակ քրիստոսամարտ Բիէն Լոգիի հետ. «Ո՛չ իմիք, ո՛չ ումեք կը հաւատամ: Կը սիրեմ ո՛չ զոք եւ ո՛չ ինչ: Զուռնիմ ո՛չ հաւատք, ո՛չ յոյս... Բոլոր այն բաներէն զոր մեզ ուսուցին յարգել՝ ոչինչ գոյութիւն ունի: Կեանք մը կայ որ կ'անցնի, որմէ տրամաբանական է ինդրել ամենէն աւելի հնարաւոր վայելքներն՝ սպասելով վերջնական արհաւիրքին որ է մահն:» Լոգիի այս ամբարշիտ ոչնչականութիւնը ապացոյց մի ևս է սա ճշմարտութեան թէ հաւատակորոյս քրիստոնեայ մը հեթանոսէ

¹ La splendeur Catholique, p. 43—44

մը աւելի վատթար է յաճախ, և թէ յետ հայհոյելու ընդդէմ կրօնի կը հայհոյէ նաև ընդդէմ բանականութեան:

Եւ բանաստեղծներէ վերջ՝ եկան նաև բնագիտական գիտութեան հոգեբանք շուարեցնել զայն և մօտեցնել «յիմարութեան անդունդին»... Իր փիլիսոփայութեան դասերուն մէջ ունեցած յաջողութիւններէն քաջալերուած, սկսաւ անյագօրէն լափել Արիստոյ, Քանդ, Ֆրիդէ, Հեկէլ, Շոքէնհաուէր, Հարդման, Ռիպօ, Դէն և մանաւանդ Ֆրէտէրիկ Նիցշէ. որոնց մասին անիրաւութիւն չպիտի ըլլայ կրկնել մեծին Պոսիւէ խօսքերն:

«A force de raisonner on arrive à déraisonner.»

Իր փիլիսոփայութեան ուսուցիչը առաջին օրը իբրև նախաբան իր դասերուն՝ առանց ժպտելու և աշխարհի ամենէն մեծ լրջութեամբ անշուշտ՝ հետեւեալ խոստումն ըրած էր: «Պարոններ, չպիտի ուսումնասիրենք փիլիսոփայութիւնը՝ յանգելու համար սկեպտիկութեան, ընդհակառակն, փիլիսոփայութիւնը՝ համոզումներ պիտի տայ ձեզ, պիտի ամրապնդէ ձեր խօսքերը, պիտի զօրացնէ ձեր նկարագիրներն, և այլն: Ափսո՛ս իրողութիւնն այն է որ անկարգ ու անսանձ փիլիսոփայութեան մը ուսումնէն վերջ, ամէն ինչ խանգարուած էր կրթանէր դպրոցականին գլխուն մէջ, և Աստուծոյ գաղափարին հետ քայքայուած ու յօգս ցնդած էին ո՛չ միայն հոգի, բարոյական օրէնք, ստուգութիւն, առաքինութիւն, այլ և արտաքին աշխարհն իսկ, միջոցն ու ժամանակ, նիւթ ու կեանք. ամէն ինչ «երազի» մը կերպարանքն ունէր, առանց սկզբական առարկայի, առանց իրականութեան:

Մի քանի մեծագոյրդ անուններու վահանին ներքեւ գրուած այս անամէջ դասերն ինչ աւերներ չեն զործեր տասնեւվեց կամ քսան տարեկան սրտի մը մէջ ուր իբրև յալեկոծեալ ծովու կը գոռան ու կը մոնչեն կրից փոթորիկներն համայն չղթայազերծ ու մոլեղին: Այլ ևս բարոյական անկումները չեն հաշուիր, և բորբոքեալ երեւակայութեան մը մէջ ոճիրներ կը յաջորդեն ոճիր-

ներու՝ չհաւատալի արագութեամբ. ցերեկի ու գիշերի գրեթէ ամէն ժամին ունին իրենց պատմութիւնը յոգնատխուր, որ տիպ մով գրուած է ստէպ և երբեմն ալ արիւնով: Ու այսպէս քանիներով համար կը թարչամի տարաժամ երիտասարդութեան ծաղիկը ցեռատի՝ կրից խորշակներէն տօթակէզ:

Բայց գթութեան ժամն մօտ էր հնչելու. Բարձրեւոյն աչքը կը հսկէր անոր վրայ. տանեւինն տարեկան՝ վարժարանէն ելած, բախտը կ'ունենայ ճանչնալու Մորիս Պառէսի գրութիւնները, և յետոյ կը ներկայանայ անձամբ երեւելի հեղինակին, զոր կը բաղդատէ Բասգալի և Ռասինի՝ իր կորովի մտածութեանց և մանաւանդ գրական հագուածքիւ ձիւքերուն համար: Այն որ մի օր Ֆէրտինաս Պալանդիէրի պիտի յաջորդէր Ակադեմիոյ մէջ և Ռըվիւ sk Sko Մոնթի խմբագրապետին ու վսեմախոհ իմաստասէր - ջատագովին ներքուզ պիտի արտասանէր ի սքանչալումն գրական աշխարհի, յոյժ սիրալիր գէմքով և խրախուսիչ քաղաքավարութեամբ կ'ընդունի Լիոնի անձանօթ երիտասարդը, և կը լինի աստուածային նախախնամութեան գործիքն՝ ներշնչելու համար անոր բարւոյն իղձը և առողջ գաղափարներու. սէրը կազդուրիչ:

Ո . Կ . Ո .

26 Մայիս 1914

Կ Ի Ի Ր Ի Ն Է Ն

Կ'ընդունինք հետեւեալը.

Գեոյ. Գերապայծառ Տեր,

Հանգէ՛ք ներկայս հիւրընկալել Ձեր Պատուական եւ ազգօգուտ քերթին մէջ որով երախտապարս կը բողբոխի մեր ուղղափառ համայնքը:

ՅՈՐՈՍ ՅԷՐՃԱՆԵԱՆ

Կիւրիմ 10 Յուլիս 1914

Ներկայ 1914 տարին նուիրական տարի մըն է մեզի համար, որովհետեւ ստոյգ և վաւերական արձանագրութիւնները կը հաւաստեն թէ ճիշդ երկու դար առաջ, այսինքն

1714ին Ուղղափառ կրօնքը մուտք գտած է ի Կիւրին: Մի քանի ընտանիք սիրայօթար դիմած են ի ծոց Ընդհանրական Սուրբ Եկեղեցւոյ, դաւանելով ինչ որ կը հաւատայ և կը դաւանի Հոռոմէական Ս. Եկեղեցին: Կիւրինը միշտ հաւատարիմ մնացած է իր կրօնքին, հաւատարիմ իր նախնիքներէն ընդունած սկզբանց, կուրծք տալով նախատանաց, արհամարհութեանց և հալածանաց:

Արդ Կիւրնոյ ուղղափառութիւնը սրտի գոհունակութեամբ կ'ուզէ կատարել երկերիւրամեայ Յոբելեանը ի փառս և ի գոհութիւն միոյն Աստուծոյ, ի պարծանս Ս. Եկեղեցւոյ և ի յարգանս իր պաշտելի նախնեաց:

Ահա այս նպատակին իրագործման համար Կիւրնոյ ուղղափառ համայնքը սրտի խանդավառութեամբ որոշեց պատգամաւորութիւն մը խաւրել ի Սեբաստիա Արհիւպատիւ Լեւոն արքեպիսկոպոս վիճակաւորին մօտ՝ հրաւիրելու համար Նորին Սրբութիւնը: Սրբաբ. Յունիս 16 երեքշաբթի օր տեղէն մեկնեցաւ Նորին Արհիպատիութեան փոխանարդ Գեր. Գրիգոր Վ. Փէհլիվանեան՝ զըպրոցի խնամակալ երկու Պատ. Անդամոց ընկերակցութեամբ:

Յունիս 3— Ի մեծ ցնծութիւն սրտի առհասարակ բոլոր ժողովրդեան՝ հասաւ աւետարեր հեռագիրը, որ կը ծանուցանէր սիրայօթար ընդունելութիւնը գեղեցիկ առաջարկին և նոյն օրը դէպի Կիւրին ուղեւորութիւնը Ն. Արհի. Տէրութեան:

Յունիս 5.— Աննկարագրելի էր ժողովրդեան ոգեւորութիւնը. դիմաւորողներէն 30 ոգւոյ չափ, ընկերակցութեամբ Գեր. Բեքեւեանի, կառքերով և ձիերով երեք ժամ հեռու գտնուող Ղալաճի—Բունարի կոչուած տեղը ժամը 4ին հասած էինք. ժամը վեցին զրեթէ կէս ժամ հեռուէն դիտեցինք, կառքերուն պէպի մեզ սուբալը. ժամը Յունիսուն հասան. ուր մի ժամ դադարէ յետոյ՝ կառքերը շարժման մէջ գրուեցան և սկսան սլանալ զառիթափն ի վար:

Ժամը տասնին կեցած էին կառքերը և հեծեալները Առաջնորդարանին դուռը, ուր

խուռն բաղմութիւն մը զիգուած էր: Արհի. վիճակաւորը՝ խիստ յուզուած ժողովրդեան խանդավառ յարգանքներէն տուաւ տնոնց իր հայրապետական օրհնութիւնը:

Յունիս 8.— Երկու օր վերջ՝ դպրոցական հանդիսութիւնք տեղի ունեցան. նոյն օրը Ա. Յղութեան Բերց ջանքով պատրաստուած, Սրբուհի Ագնէս տրամախօսութիւնը գեղեցիկ կերպով ներկայացուցին դպրոցի աշակերտները՝ յետ բարի-գալստեան ճառերու: Ներկայացումը խիստ յուզիչ էր. առ հասարակ արտասուելից էին հանդիսականներուն աչքերը. հանգէսը չորս ժամ տեւեց, որմէ մեկնեցան քաղցր տպաւորութեամբ:

Նոյն օրը տեղի ունեցաւ նաև աշակերտուհեաց պարգեւաբաշխութեան հանդէսը, ուր իւրաքանչիւր ուսանող՝ իր ստացած նիշերուն համեմատ ճոխ ընծաներով վարձատրուեցաւ Արհի. վիճակաւոր Հօր կողմանէ զորս կանխահոգ մտածութեամբ բերած էր:

Յունիս 9.— Նոյնպէս տեղի ունեցան տղայոց կողմանէ, բարի գալստեան ճառեր, տրամախօսութիւն, դաւեչաւ և պարգեւաբաշխութիւն, որ 4 ժամէն աւելի տեւեց: Արհի. Գերապալծաւոր՝ հանդիսութիւնները աւարտելէ վերջ՝ թէ օրիորդաց և թէ տղայոց խիստ սրտաշարժ յորդորական խօսքեր ուղղեց ու քաջալերականներով սրտապնդեց զամէնքը: Նշանակութեան արժանի է ի մէջ այլոց՝ այն նախադասութիւնը՝ որ ըսաւ. «Ամիսներէ ի վեր քաջած վշտերս և դառն նեղութիւններս՝ թեմիս մէջ՝ գոպցես մոռցայ: Ձեր ամենուր որդիական յարգանքն ու կրօնասիրութիւնը յոյժ մխիթարութիւն եղաւ ինձ»: Դպրոցական քննութիւնք արդէն աւարտած էին:

Իսկ Յոբելեանի հանդիսութեանց նկատմամբ տեղեկացնել ուրիշ առթի կը թողուի:

ԷԹՏԷՆ ԲԵՐՆԻՁԷ ՏՕՂՐՈՒ

— Պու կիւն նէ՞ ետէճէքսինիզ։ Մարի աէյօրտը քի տիւն Պալըզ Բազարընտա նէֆիս գըլըճ պալըզը, ուսկուսընու, իւլիֆէր վէ սա- յիրէ վար իմիշ...

— Վազ կէչ շու պալըզլարտան, պիլիր- սինքի պէն պալըզ սէվմէմ։ Պէնիմքի եա- նընտա բաթաթէսլի կիւզէլ պիր պիւֆթէք օլտո՛ւ մը, իշթէ օնը սէվէրիմ։

— Ֆազաթ, ազիզիմ, տէր մատամ, բէճա հօլլու, պու կիւն ճոմաա տըր, պիլմէյօր- մուսընըզ։

— Բապուճըմա սէնին ճուճաան... պու եիրմի սէնէտէն պէրի էվլէնմիշիզ։ Կէր ճու- մաա սապահը սէնին պու ճուճաա մէսէլէ- բինլէ գաֆամը իւթիւլէրսին...

— Զանն իտիյօրմըսըն քի շու ճէվապըն պէնի մէմնուն իտէճէք պիր ճէվապ տոր։

— Էլ վէրիր, պանա պազ, պէն պի- ֆթէք իսթէրիմ։

— Զանըմ տիւշիւն պիր քէրրէ քի մեծ պահտա պուլուսըյօրըզ։

Էֆէնտի պահպահա իլէ պիր կիւլէր։

— Սէնին մեծպահքընըն պանա զարարը վա՛ր. իշթէ սանա պաթըլ պիր զիւլիւմ. տէ- մէք տիր քի մեծ պահք օլուրսա էթ ֆէնա տըր զանն իտիյօրսուն...

— Եօզ, կէօզիւմ, ֆէնա տէյիլ տիր, եա- սազ տըր։

— Քիմ թարաֆընտան հասազ օլուն- մըշ... շայէտ մէճլիսի սընհի թարաֆընտան օլսա, օնը անլարտըմ... Ֆազաթ բաբազըն պիրինին էթ եասազ տըր տէմէսի իւզէրինէ էթտէն կէրի տուրմազ կիպի պիր տիվանէ- լիյի անլայամամ։

— Շիմտի նէ տէյօրսըն, Մարիյի գասա- պա՛ մը հօլլայայըմ։

— Գասապա հօլլա, պաստըրմաճըյա հօլ- լա, իսթէրսէն ճէհէննէմէ հօլլա, եէթէր քի պանա օրատան պիր բարչա էթ կէթիրսին։

Պու ճէվապա Մատամըն սըզըլմասը իւզէ- բինէ, քէնտիսի եինէ գահ պահ կիւլէր վէ Մատամ մէյուսա պիր սէսլէ օնա,

— Սէն թէօվպէյէ կէլմէքսիլին էօլէ- ճէքսին...

— Տէմէք տահա սէն օ ֆիքիրտէ սին քի Ալլահ պէնի պիր լօգմա էթ իշին մահքիւմ իտէճէք...

— Օլապիլիր եա, էթ իշին տէյիլ... Ի- թաաթսըզըլըն իշին։

— Սէն պանա իթաաթսըզըլզ իտիյօր- սըն... պէն զանն իսէրտիմ քի պիր գարը քէնտի գօճասընա միւթի օլմալը տըր... Եիւրիւ, իշինէ կիթ, պէնի բահաթ պրազ, պէնիմ ֆիքրիմի սէն տէյիշտիրէմէզսին...

Մատամ պունունլա տա մաղլուպ օլմազ։

— Սօն սէօզիւնիւ սէօլլէտիւն մի։

— Էվվէթ։

— Գըլըճ պալըզը սէվմէզմիսին։

— Էվվէթ, սէվէրիմ, ֆազաթ արգասըն- տան տա պիֆթէք կէլմէլի։

— Պիֆթէք եէրինէ սանա կիւզէլ պիր գայզանա վէրսէմ, Պիլիսին քի Մարի օմէ- թի չօզ կիւզէլ հաբար։

— Զանըմ պէնի իւզմէ... աճըմտան մը էօլտիւլէճէքսին պէնի։

Պու աասպընա տօզուսան մուհավէրէյի գըսա քէսմէք իշուն էֆէնտի օտասընտան չըզար սալօնա կէչէր։

— Պու նէ զօրպալըզ... Իսթէտիյինի հաբամապըն... պազ սէն շու գաթօլիքէրէ, զըս գըվրազ պաղլանմըշ... քէօրլէնմիշ տիր- լէր. պաթըլ զիւլմէրլէ սօլը տըրլար... Պու գատար վաղըթտան պէրի էթ եէրիմ, պանա հիշ պիր զարար վէրմիշ մի... Սիւտ- տէն քէսիլտիմ քէսիլէլի պիր ալթմըշ սէնէ վար, Կէր վազըթ էթ եէրիմ, պունըն արա- սընտա պազը Աւազ Ուրբաթլարտա վար տըր... Էվվէթ, գարըմ զայէթ հըրսլանըր- տը... Ֆազաթ պանա նէ... էթ, սէնէնին հիշ պիր կիւնիւնտէ Աւազ Ուրբաթ կիպի լէզիզ տէյիլ տիր։

* *

Սէքիզ կիւն սօնրա։

Էֆէնտի հաթաղընըն իւզէրինտէ սէրիւ- միշ... Կիճէ իւզէրինէ պալըզընըզ կէլմիշ... Եիւրէք տէ էյի իշլէմէյօր։

— Ժանն, Ժանն, պէն էօլէճէլիմ...

Կիճէնին սաաթ օն պիր պուշըլընտա

Մարիյի սօքթօրա եօլլարլար: Տօքթօր կէ-
լիր... սըճագ սու իլէ քօմբէս էմր իտէր...
նէֆէս ալամպիլմէսի իչին պիր թօզ եագար...
էթէրլէ էնժէքսիյօն եարար... վէ չէքիլիր
կիտէրքէն

— Խասթալըղընը եարըն պիլտիրիրիմ,
տէր:

Կիճէ էնտիչէլէր իչինտէ կէչէր... Սա-
պահա գարըն պիր ազաճըզ բահաթլանըր...
Մատամ սօրար:

— Նամըլ, պիրազ գուվլէթլէնէպիլ-
տիւն մի:

— Խայըր, խայըր, զաիֆիմ:

Ֆէրտասը կիւն սօգթօր թէքրար կէլիր:
Մուսայէնէ իտէր, տիւնլէր... Մատամ վէ
Միւսիւ սապըրսըղըղլա պէքլէրլէր քի խաս-
թալըղըն նէ՝ օլտուղընը անլասընլար:

Տօքթօր օթուըր...

Խասթէ եաստըղընա տայանարագ պիր ազ
սօղըրուըր քի էյիճէ իչիթսին: Մատամ իսէ
պիր սանտալիատա օթուըրըն, գօճասը հագ-
ղընտա սօգթօրըն սէօլլէմէք իսթէտիյինի օ-
նուն կէօղլէրինտէն քէչֆ իթմէյէ չալընյօր-
տը:

— Էֆէնտի ղըտանըն քէսրէթինտէն միւղ-
թարըպ տըր:

— Տէմէք քի չէքտիյիմ նէֆէս տարըղը
տէյիլ տիր:

— Խայըր, սիզին եաչընըղտա տըյըր նէ-
ֆէս օլամազ... օ իւզէրինիզէ կէլէն պօղու-
մանըն պաչգա պիր սէպէպի վար տըր, ուզ-
վիաթընըղտա պիր չօգ քլօրիւր վէ թօքսին-
լէր հասըլ օլտուշտըր, վէ պուռլար տիշարը
չըգամայօրլար... իշթէ պիրտէն պիրէ պու-
մատտէլէր պէօպրէյի սարմըլար վէ օ եիւղ-
տէն ղէհիրլէնմիշսինիզ...:

— Արթըզ պէնիմ իչին հիչ իւմիտ եօգ
մը տըր:

— Նի՛չին իւմիտ օլմասըն: Պէօպրէյի գուր-
թարըրզ, իշ պիթէր:

— Նէ՝ վասիթա իլէ:

— Սու բէրհիզի իլէ:

— Սու բէրհիզի նէ՝ տէմէք տիր:

— Պիր բարչա սու իչմէք... պիր ազ չի-
չէք... սույը իչմէք տէմէք տիր:

— Պու գատար մը... Պէն զաթէն զա-
յիֆ իմ... եէմէզսէմ էօլիւրիւմ...:

Տօգթօր կիւլէր:

— Զաիֆիք կէչէր... Հէմ տէ պիր խաս-
թա հիչ պիր վագըթ աճըղգտան էօլմէզ:

— Եաղը պիր էթ սույընտ օլտուն միւ-
սատէ իթմէ՞գմիսինի՞զ:

— Եօգ, եօգ գաթիէն:

Պունա մատամ տա թէաճճիւպ իտէր, վէ

— Տօքթօր, պագընըզ էֆէնտի չօգ զա-
իֆտիր, տէր:

Տօքթօր օսանարագ,

— Եա՛ տէտիքլէրիմէ իթաաթ իտէրսի-
նիզ վէ եախօտ իչինիզ պիթմիշ տիր... Տու-
րըն սիզէ իյղահ իտէյիմ հալինիզի, օ վագըթ
անլայսընըզ... Սիզ պօղաղընըղըն գուրպա-
նը օլմուչսընըզ... կէօրիւնիւյօր քի չօգ գուլ-
վէթլի եէմէք եէրսինիզ, պէլքի տէ էթի չօգ
եէրսինիզ:

(Մապաթի վար)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՈՌՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ. — Յուլիս
26ին արտաքոյ կարգի շքեղութեամբ տեղի ունեցաւ
Լուրսի մէջ Ս. Հ. Մ. քառեւհէկեքորդ Համաժո-
ղովին փակման թափօրը:

Հարիւր հազար ուխտաւորներ երկրպագութիւն,
աղօթք, երգ և օրհնութիւն մատուցին Ամենաուրբ
Հազորգութեան:

Յատկապէս աղօթեցին խաղաղութեան համար:

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ. — Ամե-
նապատիւ Գերեջանիկ Հոգեւոր Տէր, Պօղոս Պետ-
րոս Ժ. Թերզեան, Կ. Պատրիարք Տանն Կիլիկիոյ,
մասնաւոր շրջաբերականով պատուիրեց Աւագ Թեմի
ժողովրդապետներուն որ եկեղեցիներուն մէջ Ս. Ասա-
ռածածնայ Վերափոխման առթիւ կատարուի ին-
նօրեայ մը և ասկէ զատ ամէն օր յատուկ աղօթք-
ներ մատուցուին աշխարհի խաղաղութեան համար:

— Գեր. Կարապետ Վ. Պատուհասեան, որ վեր-
ջին ապօրինի ժողովին անգամ ընտրուած էր, մաս-
նաւոր նամակով կը յայտարարէ թէ ինք հպատակ է
հոգեւոր իշխանութեան հրամաններուն և երբեք չպի-
տի մասնակցի նոյն ժողովին:

— Ամսոյ 3ին վախճանեցաւ Զարեհ էֆ. Շիշ-
մանեան: Հանգուցեալը յայտնապէս զգալով և Եկե-
ղեցւոյ Ս. Խորհուրդները ընդունելով կնքեց իր մահ-
կանացուն: Զայս կը ծանուցանենք ի շինութիւն հա-
ւատացեալս:

ԿԵՐԻՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ— Երեսփ. Ժողովին նախագահ խալիլ պէյ, որ երեսփոխանները նիստի հրաւիրած էր Օգոստ. 2ին համար, ժողովը բացաւ ժամը 4 ու կէսին մօտ: Ներկայ էին Ներքին գործոց, հանրագումար շինութեանց և դատական նախարարները:

Թալէսդ պէյ յայտարարեց թէ Եպարքոսին կողմէ պաշտօն ունի կարգաւ կայս. իրաւէն, որ կը փակէ Խորհրդարանին արտասովոր նստաշրջանը:

Աւասիկ կայս. իրաւէին պատճէնը.

«Աւաստիոյ—Հունգարիոյ և Սերպիոյ միջեւ ծագած պատերազմն ընդհ. հանգամանք մը առած, և արդէն Խորհրդարանին ներկայացուած գրեթէ բոլոր կտրեւոր օրէնքները քուէարկուած ըլլալով, կը հրաժայեմ այսօրու ընէ փակել Խորհրդարանին արտասովոր նստաշրջանը: Ըստ Սահմանագրութեան, Խորհրդարանն առանց հրաւերի պիտի գումարուի յաւաքիկայ Նոյմ. 1ին:

«Նախարարաց Խորհուրդին պաշտօն յանձնուած է գործադրել այս կայս. իրաւէն:

«ՄԷՀՄԷՏ ՐԷՇԱՏ»

20 Յուլիս 1914

Ստորագրած են նաեւ բոլոր նախարարները:

Խալիլ պէյ ճառ մը արտաստեց ի վեր հանեց Երեսփ. Ժողովին կատարած աշխատութիւնը իր կարծառեւ նստաշրջանին մէջ և գովեց Ժողովին եռանդը, հայրենասիրութիւնն և կարգապահութիւնը:

—Երեւակայսին մէջ ալ ելմտական նախարար ճալիտ պէյ կարգաց Խորհրդարանին փակման կայս. իրաւէն որ ունի գրուեցաւ յաւակայս:

Նոր օրինագիծ զօրաժողովի.— Յօդ. 1.— Պիտոյ ժողովուրդէն եւ բոլոր ոչ-խալամ ազգերէն անոնք որ 99էն առաջ ծնած են եւ զինուորական ծառայութեան տարիքի մէջ կը գտնուին, այսինքն մինչեւ 45 տարեկանները պարտաւոր են զինուորական գործնական ծառայութեան:

Յօդ. 2.— Ներկայ օրէնքը գործադրելի է հրատարակման թուականէն:

Յօդ. 3.— Ներկայ օրէնքին գործադրութիւնը յանձնուած է նախարարաց Խորհուրդին:

Հրամայեցի առժամայէն գործադրել ներկայ օրինագիծը, եւ զայն աւելցնել տէրութեան օրէնքներուն վրայ, Երեսփ. Ժողովին գումարման ատեն զանիկա օրինականացնելու պայմանաւ:

ՄԷՀՄԷՏ ՐԷՇԱՏ

Օրինագիծ զինուորական «պէտէլ»ի.— Յօդ. 1.— Միմիայն այժմու զօրաշարժին առթիւ, զէնքի տակ կանչուած ոչ-խալամ իիթիյարներէն անոնք որ ուղեն դրամական պէտէլ տալ, ըստ առաջնոյն պիտի ընդունուի 30 օսմ. ոսկի, պատերազմական տուրքն ու նահանգային երեսփոխան (վիլայէթ երեսփոխան) առանձինն գանձուելու պայմանաւ:

Յօդ. 2.— Ներկայ օրէնքը գործադրելի է Օսմ.

երկիրներ գտնուողներուն համար, տեղւոյն մէջ հրատարակման թուականէն սկսեալ մինչեւ մէկ շաբաթ, իսկ օտար երկիրներ եւ առանձնաշնորհեալ նահանգներ գտնուողներուն համար յարմար միջոցներով հրատարակման թուականէն սկսեալ մինչեւ երկու շաբաթ: Այս ժամանակամիջոցն անցնելէն ետքը, եթէ դիմում կատարուի, դրամական պէտէլը կրկին կը գանձուի:

Յօդ. 3.— Ներկայ օրէնքին գործադրումը յանձնուած է արտաքին գործոց, պատերազմական եւ ելեւտից նախարարներուն:

Հրամայեցի ներկայ օրինագիծը գործադրել ու տէրութեան օրէնքներուն կարգն անցընել Երեսփ. Ժողովին բացման ժամանակ անոր օրէնքի ոյժ տրուելու համար:

ՄԷՀՄԷՏ ՐԷՇԱՏ

310ի զինուորներ.— Զինուորական ծառայութեան առժամայ օրէնքին 147րդ յօդուածին պահանջած հանգամանքներուն մէջ գտնուող այն անձինք որ ներկայ տարւոյն Սեպտեմբ. 4էնքի տակ պիտի կանչուէին, եւ նոյն հանգամանքներուն մէջ գտնուող 310ի ծնունդները այժմէն զէնքի տակ կանչելու եւ մարզելու մասին արտօնութիւն տրուած է պատերազմական նախարարութեան:

Կայս. ներկայ իրատէին գործադրումը յանձնուած է Պատերազմական նախարարին:

ՄԷՀՄԷՏ ՐԷՇԱՏ

Եպարքոս ՄԷՀՄԷՏ ՍԱԻՏ

Պատերազմ. նախարար

Եւ ընդհ. սպայակոյտի պետ

Էնվէր

* * Ահաւասիկ յիշեալ 147րդ յօդուածը.

303, 304, 305, 306, 307, 308, եւ 309ի ծնունդներէն անոնք որ ունեն քաղաքացիական ծառայութիւնը կամ պէտէլ չեն տուած, առանց մուրհիմի մուրհիմի նախելու զէնքի տակ պիտի առնուին, եթէ հետեւեալ պայմաններուն մէջ գտնուին:

1. Անոնք որ իրենց ունեւորը աւարտած են համալսարանին, դատներու վարժարանին, Տէֆթէրխանէի վարժարանին, վարժապետանոցին, ելմտական վարժարանին եւ ուրիշ պետական, մասնաւոր եւ օտար բարձր վարժարաններու եւ ուրիշ երկիրներու բարձր վարժարաններուն մէջ:

2. Անոնք որ Սուլթանիէ եւ եօթնամեայ իտալիներէ եւ նոյն ատիճանին վրայ գտնուող մասնաւոր եւ օտար վարժարաններէ վկայական առած են եւ որոնց զինուորական ծառայութիւնը յետաձգուած էր վերջին երկու կարգերուն մէջ իրենց ունեւորը շարունակելուն համար:

3. Կրօնական ուսանողներէն անոնք որ զինուորապետութեան նախորդ օրէնքին համաձայն ճիշտ տարեկան քննութիւնը առած են:

4. Անոնք որ ներկայ օրէնքին հրատարակման պահուն իրենց ուսումը կը շարունակեն Ա. հատուածին մէջ յիշատակեալ պիտական, մասնաւոր եւ օտար բարձր. վարժարաններուն մէջ:

5. Կրօնական ուսանողներէն անոնք որ տական լին վեցերորդ տարւոյ իրենց քննութիւնը չեն տուած, կրօնական վարժարաններու կանոնագրին համաձայն յիշեալ քննութիւնը տալէ ետք Ա. Բ. եւ Գ. հատուածներուն մէջ յիշատակուածները իրենց մէկ տարուան ծառայութիւնը պիտի կատարեն 330 տարւոյ սեպտեմբր, իսկ Դ. եւ Ե. հատուածներուն մէջ յիշատակուածները իրենց ուսումը աւարտելէ եւ կամ կրօնական վարժարաններու կանոնագրին համաձայն ճիշտ տարւոյ քննութիւններուն տրուելէն ետք պիտի կատարեն: Յիշեալ ուսանողներէն անոնք որոնց արձանագրութիւնը ջնջուած է եւ որոնք որոշեալ ժամանակամիջոցին մէջ քննութիւն չեն տուած, երկու տարուան համար ղէնքի տակ պիտի աւանդին Այս կերպով ղէնքի տակ աւանդելիքները եթէ վարչական դիւանի պաշտօնեայ են եւ երկու հոգի են, անոնցմէ մէկը պիտի զատուի վիճակով եւ եթէ երկուքն աւելի եւ զոյգ են, ամբողջութեան եւ եթէ տարազոյգ են, մէկէն զատ միւսներուն կէսը կ'աւանդին իսկ մնացեալներուն ծառայութիւնը յաջորդ տարուան կը յետաձգուի:

6. Զօրաշարժին հետեւանքով, որոշուած է Թուրքիոյ ամէն կողմը պաշարման վիճակ հրատարակել:

7. Զօրահանութեան հետեւանք օսմ. շոգենաւային վարչութեան նաւերը դադարեցուցին իրենց երթելները դէպի Միջերկրական եւ Աեւ ծով:

8. Նկատի առնելով երմտական տագնապը, որ միջազգային կացութեան բերմամբ կը տրէ եւրոպական եւ օսմ. հրապարակներուն վրայ եւ որուն հետեւանքով առեւտրական գործերը դադրած են եւ գրամը քիչցած է, Օսմ. կառավարութիւնը, ուրիշ երկիրներու ձեռք տուած միջոցներուն համաձայն, արգարացի կը նկատէ պարտք ունեցողներուն տալ պէտք եղածին չափ պայմանաժամ, որպէսզի կաքենան իրենց պարտքին հատուցանել, երբ կացութիւնը ստանայ իր բնական վիճակը:

Հետեւապէս օսմ. կառավարութիւնը կը հրատարակէ հետեւեայ օրէնքը:

Յօդ. 1.— Ներկայ օրէնքին հրատարակութեան թուականէն սկսեալ մէկ ամիս երկարաձգուած են պայմանաժամերը լոյսը պարտքերուն եւ յանձնառութիւններուն, որոնց մէջ են նաեւ պանքաներու յանձնառած աւանդները, պայմանաժամով կամ առանց պայմանաժամի:

Յօդ. 2.— Ներկայ օրէնքը գործադրելի է իր հրատարակութեան թուականէն սկսեալ:

Յօդ. 3.— Դատական եւ երմտական նախարարները պաշտօն ունին ներկայ օրէնքը գործադրել:

Կը հրամայեմ առժամապէս գործադրել եւ կայսրութեան պաշտօնաթերթին մէջ հրատարակել ներկայ օրինագիծը, որ պիտի ենթարկուի բնդհ. ժողովին վաւերացման, յառաջիկայ նստաշրջանին մէջ:

ՄԵՀՄԵՏ ԲԵՇԱՏ

Ստորագրած են նաեւ Եպարքոսն եւ դատական ու երմտական նախարարները:

*. Երմտական նախարարութիւնը որոշեց որ գաւառներու մէջ յանձնաժողովներ հսկեն արտիքներու արտաժաման վրայ եւ տեղական պէտքերը ապահովելէ ետք թողարարեն, որպէս զի գինները չբարձրանան: Տրամագրելի քանակութեան մէկ տասներորդը միայն պիտի արտաժուի:

*. Պոսոյ մէջ ապրանքները սկսան սղիլ ժողովուրդը նեղութիւն կը կրէ յատկապէս պանքաները դրած ստակը ետ առնել չկարենալուն համար:

— Օսմ. Պանքան մինչեւ երկու հարիւր ոսկի կը վճարէ իր քով դրամ ունեցողներուն, ամբողջովին պանքաթ, Պանքաթները սեղանաւորները կը փոխեն անգլ. ոսկիով զրուշ առ զրուշ կամ մէճիտ, իրաջին 107 ու կէս զրուշով:

— Տէօյլէ Պանք առժամապէս փակուած է: Վինըր Պանք չէք կուտայ: Տէօյլէ Սեիկթ Պանք մարդ գլուխ տանը հինգ իրա կու տայ: Բուէտի Լիոնէ մարդ գլուխ քանը հինգ իրա կուտայ: Բայց գործողութիւնները դանդաղած են Ֆրանսացի պաշտօնեաներուն զինուորութեան քացած ըլլալուն պատճառաւ: Հայ Պանքան առ այժմ մարդ գլուխ հինգ ոսկի կուտայ:

*. Երկու կէտ կը ճշդուի վերին հեռագիրներէն: Այսինքն թէ Իտալիա որոշիւ է չէզոք մնալ, Ինչպէս յայտնի է Թուրքիա եւ նոյն որոշումը տուաւ, եւ Օգոստ. Յին հեռագրուեցաւ օսմ. դեսպաններուն թէ զօրաշարժին պատճառն է երաշխաւորի կոյսը: Թեան ապահովութիւնը Ռուսեագերման եւ Ֆրանքեագերման սահմանադրութիւններուն վրայ կոխները կը շարունակուին, եւ գերման մէկ քանի յարձակումներ ետ մղուեր են Գերման նաւատորմը կը ջանայ Պալթիկի ուստորմիղը ջախջախել, եւ կը գործէ ուսական նաւահանգիստներուն մօտ ինչպէս ցոյց կուտայ Լիպուսի ուժակոծումը:— Չանակորա պաշտօնապէս պատերազմ յայտարարած է Աւստրիոյ դէմ, եւ Չանակորեան բանակը համախմբուեր է Լովսէի լիւրան վրայ, ուրկէ դիւրին է իրեն համար ուժակոծել Աւստրիական հողը:

— Վերջին ամէնէն կարեւոր շուրն տյն է որ Անգլիոյ շարժման մէջ դրեր է իր նաւային եւ ցամաքային բանակները եւ պատերազմ 'հոլանդիք է Գերմանիոյ դէմ, Օգոստոս 4ին, իրիկուան ժամը եօթից: Մալթայի տորմիղը ճամբար ելեր է գործակցելու Ֆրանսական տորմիղին: Միայն Խմբիքիսիլ արեւմտեւ-յաւաքանալը մնացեր է Մալթա, կ'երեւի թէ հալածեալ համար գերման մէկ քանի մարտնիւսեր որ կը շրջին

Արշիպեղագոսի և Յոնիականի մէջ, իրենց խորհրդի ունենալով աւստրական նաւահանգիստները, և զլիաւորապէս Քոլտ զինուորական նաւահանգիստը: Հաւանքն խիստ ուշագրաւ լուր մը կը տրուի թէ անգլի մարտանաւեր երեւցեր են Արշիականի և Յոնիականի մէջ: Ռուսները սեւ ծովու մէջ գրաւեր են գերման Աթլաս շաքենաւը, իսկ Ալանտ Պալմիկ կղզիներուն մօտ առաջին նաւամարտը տեղի ունեցեր է ռուս և գերման ուժերուն միջեւ, և կ'ըսուի թէ Գերմանները գրաւեր են նոյն կղզիները: Լուր կը տրուի Աթոքու-մէն օգոստոս 4 թիւով: Այսքան կարեւոր յաջողու-թեան մը լուրը ընկանաբար պիտի փութային տալ գերման աղբիւրները: Բայց նոյն իսկ եթէ Գերմանք գրաւած ըլլան Ալանտ կղզիները, առիկա վճռական ազդեցութիւն չի կրնար ունենալ պատերազմական գործողութիւններուն վրայ: Խնդիրը պիտի վճռուի ցամաքի վրայ, իսկ ծովու վրայ վերջին խօսքը պիտի Քայ Անգլիոյ, և անվիճելիօրէն յայտնի է թէ ինչպէս...: Անգլի, նաւատորմին և բանակին անհուն խառ-դավառութեան մէջտեղ շարժման վիճակի մէջ գեր-ուելը ցոյց կու տայ որ բրիտանական կառավարու-թիւնը յուսահատուի է իր բրած գերագոյն ճիգէն, համաձայնութեան եզր մը գտնելու մասին: Արգէն Պերլինէն հեռագիր մը կ'ըսէ բացէիբաց որ պատե-րազմական գործողութիւնները օկսած ըլլալով հա-մաձայնութեան խնդիր չի կրնար ըլլալ: Իսկ Պիլիպի չէզոքութեան բռնաբարումը պատճառ դարձեր է որ Անգլիա անմիջապէս պատերազմ հռչակէ Գերմանիոյ դէմ:

Ուրիշ կարեւոր լուր մըն էր Իտալիոյ պաշտօնա-կան յայտարարութիւնը չէզոքութեան մասին: Ասի-կա անակնկալ չէր: Ֆրանսայի դէմ պատերազմ մը ամենէն անժողովրդական բռնը պիտի ըլլար Իտալիոյ մէջ, ուր ժողովուրդը սրտանց Ֆրանսայի և Երբեմն համաձայնութեան համակիր է, և թշնամի Աւստ-րիոյ: Նոյն պատգումը կը տեսնուի նաև Ռուսմանիոյ

մէջ, ուր ժողովուրդը և բռնակ կը պահանջեն քայլի Աւստրիոյ դէմ: և իրականացնելու ռուսները ազգային միութիւնը, կցելով Աւստրիոյ ռուսները գաւառները:

— Վերջին միւս կարեւոր լուրն է Նիդըրլանդա-փական մը թուրքիոյ կողմէ, իր չէզոքութեան պահ-պանման համար:

Պրիսկ 5 — Պիլիպիս այսօր պատերազմ հռչակեց Գերմանիոյ դէմ:

Լոնտոն 5.— Ահապին խառնափառութիւն կը տիրէ, 450,000 հոգինոց բանակ մը կը պատրաստուի Պիլիպիս զրկուելու համար:

Պերլին, 5.— Միջերկրական գտնուող գերման մարտանաւերը երէկ երեւցան Ալիպիոյ ծովագիւղին մօտ և բանակցին մէկ քանի մարացեալ վայրեր ու ֆրանսական զօրաց փոխադրութեան յատուկ վայրեր: Ֆրանսացիք պատասխանեցին անոնց կրակին:

Վիեննա, 5.— Պիլիպիսի մերձակայ ամրոցներուն մէջ և յարակից բարձունքներուն վրայ Սերպերուն դրած թնդանօթները բռնուի կրակով մը ջնանցին ար-գիլել աւստրիական զօրքերու շարժումները աւս-տրիական զօրքերին վրայ, ինչպէս նաև նաւակու-թիւնը Սալալի և Իանուրի վրայ: Աւստրիական զօրքը որոշեց ուժակոծել այդ կէտերը որ լուսութեան դատապարտուեցան և կռիւր այսպէս վերջացաւ: Սերպ ամրոցները ծանրապէս քնատուեցան: Քաղաքը չւարկածուեցաւ: Տրիեստի վրայ հանգարտութիւն կը տիրէ:

Բարիզ, Յու. 31.— Իրիկունը մէկը ատրճանակի մէկ հարուած արձակեց Քաթէ տիւ Քուաասանի մէջ ընկերվարական հանրածանօթ երեսփոխան Մ. Ժոսէօի վրայ, որ ծանրապէս վիրաւորուեցաւ: Մէկ քանի զնդակ հանգիպած էին գլխուն: Վերջին պա-հուն Մ. Ժոսէօ մեռաւ առած վէրքերէն:

Բարիզէ կը հեռագրեն Յու. վերջերք թէ Գալ-միթը սպաննող Տիկին Բայյոն անպարտ արձակուեցաւ:

Օգոստոս 6ին Քոլոյց ելաւ Պառոյ մէջ թէ ողբացեալ Գալմիթի որդին ապանհած է Բայյոն և իր կինը:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	497
Հին վաւերացումներ	499
Եօթնեակ Քրիստոսէի	501
Գիտական	502
Իրիկուն անօրօք	505
Հաւատք մի և՛ յաղթանակը	505
Կիւրիեն և Գալի	506
Էթէն բերիզէ օղորու	508
Տեղեկագրական	509

ԱՐՏՈՒՄԱՏԵՐ

ՅՈՒՂ. Ծ. Կ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՈՐԵՆ-ԽՄԱԳՐԱԳԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. Կ. ԹԵՐԶԻՊՈՒՄԵԱՆ



Տպարան Կ. Արճազունց Զարաթոքի, Բերս, Պայրաճ փողոց թիւ 5, Կ. Պոլիս

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .— Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20 .— մէկ թիւ՝ 1 դհկ. —Արսասան-
ման տար. Ֆր. 10. վեցամս. 5.— Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՑԷ .— Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4 .

Գոյիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարսի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրատնին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնը
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակագրոյժ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Բրիտ. Վարդապետութեան. գին 2 դհկն.:
Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն.:

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայ-
նի ճոճ է ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար: Կը տպուին ամեն տե-
սակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, բարդեր, քարդ-ատրեճներ,
մահազդեր, եւն. եւն.: Գիները անմեղքի կերպով աժան են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյտ զոհ գլխի
մնան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:

VIENNE 1. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Brunn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitzu, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Pölten, Stanislaw, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakouy

Agences à Stamboul, Péra et Scutari.

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escampte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accréditifs simples et documentaires;

Paiements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat de vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.